

Մ Ա Ս Ի Ք

(Տես Հատ. ԽԸ. յ'էջ 425)

Յոյն և Լատին դասական մատենագիրք յայտնի տեղեկութիւններ չեն տար լերանս վրայ, և ոչ իսկ Ստրաբոն կը յիշէ զայն, այլ միայն Հայոց լերինք անուամբ գոհ կ'ըլլան, նոյնպէս Ս. Հարք ալ երբեքն ԱՐՄՐՄՏԵԱՆ, կամ ԱՐՄՐՄՏՍՅ ԼԵՐԻՆՔ կը յիշեն, և թէպէտ այսպիսի մասնաւոր անուամբ կը կոչեն զլեռնն տապանակիր (զոր օրինակ ԼՈՒՊՍՐ կամ ԼՈՒՎՍՐ, ՊՍՐԻՍ կամ ՎՍՐԻՍ՝ Սինիադ գաւառին մէջ, ԿԵՐՈՆ, ՈԿԻԼՍ, ԿՈՒՍԴՐՍ (Քառակոշի, թերեւս 'ի պարսկականէն Քոնիստէր (Հրոյ լեռն), զոր Յոյնք 'ի Խոռատրատէս փոխեր էին), այսու հանդերձ չենք կրնար օրոշ կերպով իմանալ նոյն լերան դիրքը արդեօք այս գաւառին մէջ է թէ կորդուաց կամ ուրիշ տեղ: Ոմանք զլուպար՝ ՆՊՍ կը համարին, զոր կը ստուգաբանեն Նոյապատ, իբրեւ թէ յետ ջրհեղեղին Նոյայ կ'ալուած ըլլայ: Իսկ ոմանք 'ի լեզուագիտաց զՊարիս կամ զՎարիս կը համարին թէ Բարձր կը նշանակէ, ինչպէս մերայինք Մասիսի համար կ'ըսեն: Այժմեան Պարսիկք ըստ աւանդութեան քրիստոնէից յանուն Նոյի ՔՈՒՀԻ - ՆՈՒՀ կ'անուանեն զայն, ինչպէս՝ ԺԵ = ԺԷ դարուց Իտալացի ճանապարհորդք Լեառն Տապանիկ Նոյի (Monte dall'Arca di Noe) կը կոչեն. ըստ Շարտէնի՝ նաև Սէհար - Թօփոշ, այսինքն երջանիկ կատար: Իսկ Թուրքք, Աղլը կամ Ահու տաղ, կամ Աղլի և Էկրի, Թաթարք ալ Տաղըր տաղ, զոր բանասէրք զանազան կերպով կըստուգաբանեն, ոմանք մեճ, ճանր, անհեղեղ, այլք՝ կոր և քիշը, իսկ այլք՝ յանուն Ակոռի գիւղին: Զուանչէր ոմն Վրաց պատմութեան հեղինակն, կը յիշէ այս լեռը ըսելով. « Ամրանայր 'ի գերբուկս Զորոյն Մասեաց: —

ԱՂԲԻՐ ԵՒ ՎԱՆՔ Ս. ՅԱԿՈՎԲՍ. — Մասեաց վրայ տապանին նստէն աւելի կամ նուազ ստուգութիւն ունի Ս. Յակոբայ սոյն լերան վրայ տապանի կտորը փնտռելն: Բայց կարելի չէ ժխտել անոր անուամբ գտնուած վաւերաց և Աղլեր ըստ բաւականի հնութիւնը: Աւանդութեան համեմատ աղբիւրն բղխեր է Սրբոյն արտասուօքըն՝ ահաւոր վհին եղերքը, որ և ապա մեծ ուխտատեղի եղաւ մատրանաձև շէնքով մի, իսկ ջուրն ալ բժշկութիւն մարախահար տնդաստանաց. հոն քարերու ծակտիքներէն ջրոց կաթիլներ կը ծորէին կամաց կամաց, զոր յետինք Անհատական աղբիւր կոչեցին, թերեւս հին ատեն Անահատական, յանուն Հայոց սիրելի դիցամօրն: — Սրբոյն Յակոբայ աղբիւրէն ջուր կը տանէին ևս և 'ի հեռաւոր գաւառըս ուր մարախք կը հարուածէին՝ զանդաստանս, և ասոնց վրայ կը սրսկէին զայն, ուստի մէկէն մարախ ջարդող տարմահաւք՝ վարդագոյնք և սպիտակաթիկունք (Sturnus roseus) վար կ'իջնէին, զորս ռամիկն կը կոչէ Ս. Յակոբայ դուշ (թռչուն): Վենետաց տարեգիրք

կը պատմեն թէ յամի 1473 կիպրոսի թագաւորն Յակոբ՝ երկու Հայ
ղրկեր է հոս այս մարախաճալած ջրէն իրեն բերելու համար։ Եւ
նոյն իսկ յետ կործանման վանացս հոս՝ ուխտի կու գան և պակա-
սեալ ջրէն կ'առնուն կը տանին, ինչպէս յամի 1870։ — Աղբերէն
սակաւ մի վար արեւմտեան կողմն՝ յանուն նոյն Սրբոյն՝ Միաբանա-
կեցաց վանք մը կայր, անդնդոց ապառաժներուն 5992 բարձրու-
թեան վրայ, որով այս լեռը կրկնակի կերպով կ'սրբազնանայր, այս
վանացս շինութեան ժամանակն ստոյգ է, նոյնպէս նաև ճգնաւո-
րաց հոն բնակութեան սկիզբն, որ յայտ է թէ շինութենէն առաջ է։
Հարանց հին վարուց մէջ ծերու մը համար կը պատմուի՝ թէ հոն կը
բնակէր, թէպէտ և ոչ յառաջին դարս, վասն զի նոյն պատմու-
թեան մէջ Մաքենացաց վանքն ալ կը յիշուի որ յԸ դարու շինուե-
ցաւ։ Այս Ս. Յակոբայ մենաստանն փոքրիկ էր, և փոքրագոյն խա-
չաձև դմբթաւոր եկեղեցի մ'ունէր ՚ի միջավայրին, դարևանդի մը
վրայ շինուած էր յաջմէ Գինոյ գետակի, մեծ վհին ստորին խորշից
վրայ, ուսկից 6 — 800 սաքխոր կ'երևէր այս։ — չորս կողմը սակաւածառ
պարտէզ մ'ունէր, եկեղեցին ալ լեռան սև խանձաքարերով շինուած
էր. պատերուն վրայ խաչանշան քանդակներ կային, պատուհանաց
քովերն ոչ սակաւ արձանագիրք, որք բոյորովին ջնջուեցան և կոր-
սուեցան ամենայն յիշատակօքն՝ յամի 1840 մեծ սասանութեան ա-
տեն։ Ոչ ոք ընդօրինակած և հրատարակած էր զանոնք, այլ միայն հե-
լուետիացի տեղաքնին Տիւպուլայի գրոց մէջ կան անոնց ոմանց թարգ-
մանութիւնքն, որք գրուած են յԺԳ. դարու և ՚ի սկիզբն ԺԴին, յորոց
մին Զի (1274) թուականաւ է ՄիթիթՍի անուամբ մէկուն և անոր
կնոջ ԹԱՄԱՐայ, որք նոյն վանքին հետ միաբանելով կու տան անոր
իրենց բոլոր ստացուածքը, իսկ միաբանին ալ կը խոստանան ՚ի
Տեառնընդառաջի չորս պատարագ մատուցանել անոնց համար։ Ու-
րիշ արձանագրի մը մէջ ալ, որոյ թուականն է ԶԻԳ. (1274), Սմբատ
ոմն, ՂՈՂԱՅ և ԾԸՊԻ? (Zibi) իր ստացուածոց վեցերորդ մասը կու տայ
նոյն վանաց և կ'ընդունի չորս պատարագ, երկու իրեն, երկու ալ կնոջը
համար։ Կայ հնագոյն արձանագիր մ'ալ, յորում կ'ըսուի թէ որդի
ՂՓԶԱԽԱՅ Ժառայ ՍԱՐԳՍԻ, հոս գալով ընդուներ է զքրիստոնէու-
թիւն։ — Կար նաև խաչվէմ մը կ'անգնեալ յամի ԶԾԲ. (1803) ՚ի բա-
րեխօսութիւն Հասանայ առաջի Աստուծոյ։ — Ս. Յակոբայ վանքէն
սակաւիկ ինչ վեր՝ Գինոյ գետոյն երկու վտակաց մէջտեղ, որոց մին
՚ի վիհն կը թափէր, իսկ միւսն՝ անոր աջ կողմը, կը տեսնուէին քա-
րաշէն հին բնակութեանց, գիւղին և եկեղեցւոյն հետքերը։ —

Գրեթէ կէս փարսախ հեռու Ս. Յակոբայ վանքէն, նմանապէս
վհին եզերքը՝ կար հին, մեծ և տխրայիշատակ աւանագիւղն ԱԿՈՌԻ,
գրեթէ 1500 բարձրութեան վրայ, որ պիտակաբար Արկուշի կու-
չուած է և կը ստուգաբանուի Արկ-ուշի, իբրև թէ նոյ տապանէն ել-

նելով հոն որթեր տնկեր է և այգիներ կազմեր է. և այս յիշատակաւ տեղւոյն բնակիչք մեծ խնամքով կը դարմանէին զայգիս գիւղին ստորին կողմը. ունէին ևս ցորենոյ և գարւոյ արաբեր, պարտէզ զանազան պտղատու ծառոց (խնձորենի, տանձենի, դամնի, կեռասնի, ծիրանի, դեղձենի, ընկուզենի), և զանոնք դարմանելու համար Գինոյ գետոյն ջուրը բոլոր կը սպառէին: — Մեր լեզուին կազմութեան յարմար չի գար այս անուան բարդութիւնն (Արկ — ուռի), զոր հին նախնեաց մէջ չենք տեսներ, և ոչ անոր ծերումը, վասն զի ըստ ստոյգ գրչաց կը գրուի Ակոռի, և այսպէս ալ գրելու է, բայց այսպիսի կոչման պատճառը անծանօթ է: Թուրքք և անոնց հետևողութեամբ Եւրոպացի ճանապարհորդք կ'անուանեն զայն Ա. քոռչոռ կամ Ախոռչոռ: Ուստի և Բառոգ կը վկայէ թէ Հայք հասարակօրէն Ակոռի կ'անուանեն, բայց կը սխալի ըսելով թէ նախնիք Արկոռի կը գրեն: Եւ յերաւի, եթէ հարկ կար տեղեաց անուանքը բռնագրօսելու նոյի այգէգործութեան և գինւոյն պատմութիւնը հաստատելու համար, աւասիկ արձեռն պատրաստ կայ անուն Գինոյ Բլրոյն և Գետոյն: — Պէտք էր որ այս գիւղս շատ հին ըլլայ, և բարձրագոյն լերանս բնակեալ տեղիաց մէջ: Հինգերորդ դարու վերջերը կը յիշատակէ զայն Ղազար փարպեցի՝ նոյն անուամբ. «Եկեալ չուեալք բանակեցան 'ի գեօղն Մասեաց՝ որում՝ անուն էր Ակոռի... Եւ ելեալ կային... 'ի վերայ բարձրաւանդակի լանջակողմանցն ԲԱՅՏԱՆԱՌԻՆ»: Թուի թէ Մասեաց լեռնակներէն մին ալ անշուշտ է սոյն այս Բայտնաւորն, զոր Ակոռիէն վեր պէտք է փնտռել, եթէ Գոռիկանն չէ:

Ակոռի ունի իւր խաղաղական և սրբազան յիշատակներն ալ, զորս գրեթէ տասնուչորս դար 'ի խաղաղութեան պահեց լերան տարերաց խռովութեան և մարդկային գրգռմանց մէջ: — Հնագոյն յիշատակն է Բայսմաւուրաց պատմութիւնն տեսեան ԽԱՉԻԿ կամ Խաչատուր վարդապետ անուամբ մէկուն, աշակերտի Ս. Թարգմանչաց մերոց, որ 'ի տօնի աստուածայայտնութեանն հանգիպեցաւ նա 'ի գեօղն Ակոռի. որ ստուգաբանի Արկ — ուռի, յՈտն Աւագ Մասեաց. վասն զի յեւանեւն նոյի 'ի տապանէն և յիջանեւն 'ի լեռնէն, անդ տնկեաց այգի, և անուանեաց զտեղին Արկուռի»: Իսկ տեսածն էր նոյն գիւղէն նոր մեռած մարդ մը, որ կ'ըսէր ցիտչիկ. «Էս տաւնու տէր էի գեղջիս Ակոռուոյ, և է անուն իմ՝ ՂԱՉԱՐ. ունիմ և որդի մի Դաւիթ անուն, որոյ՝ 'ի մեռանեւն իմում թողեալ նմա չէն տուն, լի ամենաւն բարեօք, և արծաթ վեց հազար դահեկան. և նա բնաւ ոչ յիշեաց զիս ողորմութեամբ՝ ի տուրս աղքատաց և քահանայից. վասն այնորիկ կամ տխուր և արատւոմ»:

Ապա Խաչատուր իւր տեսիլքը պատմեց Դաւթի, որ զայն ընելով խոստովանեցաւ անհոգութեամբ գործած մեղքը, և սկսաւ մեծա-

մեծ ողորմութիւններ ընել ժողովրդեան: — Սակայն ստուգագոյն և կարևոր եկեղեցական յիշատակ Ակոռւոյ է ԱՆՍՏՏՍՍ կաթողիկոսին յիշատակն. որոյ հայրենիքն է նոյն այս տեղն: Սա էր սենեկապան Ներսէս Գ. կաթողիկոսի, « և վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն (Դուռնայ) գտանէր հրամանաւ Ներսիսի, մինչ էր նա 'ի հալածանս' 'ի գաւառին Տայոց », և ապա յետ մահուան Ներսիսի՝ անոր յաջորդեց և հայրապետական աթոռը ժառանգեց (յամս 660 — 7), որոյ համար վարդան համառօտիւ կ'ըսէ. « Շինէ զեկեղեցին Ակոռւոյ, յեղբայրանոց յարգարեալ և Հիւրանոց ». և կարծեմ թէ այս եկեղեցին հնագոյն է քան զբուն եկեղեցի աւանին: Տիւպուա այս եկեղեցւոյն արձանագիրներն ալ ընդօրինակեց: Այս եկեղեցւոյս մէջ կը պահուէր Տապանի փայտ կարծուածն, որոյ մէկ կտոր միայն կը գտնուի յիշմիածին: — Ժէ դարու փռանկ ճանապարհորդք Ակոռւոյ եկեղեցին և վանքը կ'անուանեն յանուն Առաքելոց Անդրէի և Մատթէի. սակայն եկեղեցի աւանին կը կոչուէր Ս. Աստուածասիկ, վանացն՝ Ս. Առաքելալք, և զայս վերջինը՝ Դուռնը ֆոր, 'ի սկիզբն յԺԸ դարու աւերակ գտաւ, յամի 1701. իսկ Շարտէն անկէ գրեթէ քառասուն տարի առաջ տեսաւ զայն կանգուն և շէն և յոյժ պատուեալ 'ի զեղացւոց, մանաւանդ հօն պահուած և պատուած Մատթէոս Աւետարանչին գաղաթման պատճառաւ:

